Մարզպետն այցելեց Արագածի տարածաշրջան

Սեպտեմբերի 11-ին Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը աշխատանքային այց կատարեց Արագածի տարածաշրջան:

Ծաղկահովիտի համայնքապետարանում նա հանդիպում ունեցավ տարածաշրջանի համայնքների ղեկավարների հետ: Տեղի ունեցավ խորհրդակցություն, որտեղ քննարկվեցին համայնքների սեփական եկամուտների հավաքագրման, կառավարության կողմից հացահատիկի սերմացուի, ազոտական պարարտանյութի, դիզվառելիքի հատկացման հարցեր: Համայնքների ղեկավարների կողմից բարձրացվեցին խմելու եւ ոռոգման ջրի մատակարարմանը, գյուղատնտեսական աշխատանքների ընթացքին վերաբերող, կենսական նշանակության այլ հիմնախնդիրներ, որոնց լուծման համար մարզպետն իր դիտարկումները կատարեց, տվեց համապատասխան հանձնարարականներ:

Այնուհետեւ կայացավ  տարածաշրջանի բնակիչների հետ մարզպետի եռամսյակային հերթական ընդունելությունը: Դրամական օգնության, բուժօգնության, բնակարանաշինության, սոցիալական, աշխատանքային եւ անձնական այլ հարցերով Սարգիս Սահակյանին դիմեց  35 բնակիչ:  Բոլոր դիմումներին տրվեցին սպառիչ պատասխաններ, արվեցին համապատասխան պարզաբանումներ: Դրամական օգնություն ստացավ  26 դիմումատու:

Մարզի համայնքներում հաջորդ ընդունելությունը մարզպետը կկատարի սեպտեմբերի 18-ին, Թալինի, սեպտեմբերի 25-ին՝ Ապարանի տարածաշրջանների բնակիչների համար: